Արման Հակոբյան

Ծնվել է 1965թ. սեպտեմբերի 30-ին, Երևանում:

Կրթություն՝

1988թ. ավարտել է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի արաբագիտության բաժինը՝ 1986-1987թթ. ուսանելով Ամմանի համալսարանում (Հորդանան),
1991թ. ավարտել է ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի ասպիրանտուրան:

Աշխատանքային գործունեություն՝

1989-1991թթ.	ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի արաբական երկրների բաժնի ավագ լաբորանտ,
1991թ.-2020թթ.	դասախոս ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետում (արաբերեն, եբրայերեն, դասական ասորերեն, եբրայագիտություն, արամեագիտություն, ասորագիտություն),
1991-1992թթ.	ՀՀ ԱԳՆ Մերձավոր արևելքի բաժնի երրորդ քարտուղար,
1992-1995թթ.	Եգիպտոսում ՀՀ դեսպանության երկրորդ քարտուղար,
1995-1997թթ.	ԱԳՆ Մերձավոր Արևելքի վարչության արաբական երկրների և Իսրայելի բաժնի առաջին քարտուղար, արտաքին քաղաքականության ծրագրավորման խմբի անդամ,
1997-1999թթ.	ՀՀ ԱԳՆ Մերձավոր Արևելքի վարչության պետ, ԱԳՆ ատեստացիոն հանձնաժողովի անդամ,
1999-2002թթ.	ՄԱԿում ՀՀ մշտական ներկայացուցչության խորհրդական (Նյու Յորք),
2002-2006թթ.	ԱԳՆ սպառազինությունների վերահսկման և միջազգային անվտանգության վարչության պետ,
2006-2011թթ.	Կանադայում ՀՀ դեսպանության արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար, Կանադայում ՀՀ գործերի հավատարմատար,

2011-2020թթ.	ԱԳՆ Ամերիկայի վարչության պետ,
2020-2021թթ.	Բրազիլիայի Դաշնային Հանրապետությունում ՀՀ դեսպան:

2021թ. դեկտեմբերի 28-ին ՀՀ նախագահի հրամանագրով նշանակվել է Իսրայելի Պետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան (նստավայրը՝ Թել Ավիվ):

Դիվանագիտական աստիճան՝
արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար:

Գիտական գործունեություն՝
«Արդի եբրայերեն» (Երևան, 2003), «Դասական ասորերեն» (Երևան, 2005, ռուսերեն թարգմանությունը՝ Классический сирийский язык, Մոսկվա, 2010), «Արամեագիտության և ասորագիտության ներածություն» (Երևան, 2015, անգլերեն թարգմանությունը՝ Introduction to Aramean and Syriac Studies, ԱՄՆ, 2017) դասագրքերի, մեկ տասնյակից ավել գիտական հոդվածների հեղինակ է:

Օտար լեզուներ՝
անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, արաբերեն, եբրայերեն, լատիներեն:

Ընտանեկան կարգավիճակ՝
ամուսնացած է, ունի երկու դուստր: